ՀԱՐԱՒԻ ԱՅՐԻՆ

Այնտեղ, ուր Վանայ, Գեղամայ ծովեր
Լալիս են երկնի սեւ ամպերի հետ,
Այնտեղ, ուր Եփրատ, Արաքս մայր գետեր
Երգում են տխուր, սրտառուչ ողբերգ,
Այնտե՞ղ է ապրում վաղուց շարատանջ
Մի խեղճ, բայց հզօր, դժբախտ այրի կին.—
Իր նախկին փառքը կորցրած, բազմատանջ
Երկիրն է գրկել Հարաւի այրին....
Մեռած իր փեսան, նրա աչերից
Քամում է արեան, լացի առուներ.
Այն հարաւային թագը իր գլխից
Խլեցին, տարան սէգ վայրենիներ...
Բայց նա պինդ գրկած երկրի, մոխիրներ.
Այն մոխրի տակից հանում է կայծեր.
«Օ՜, կայծեր, ձեզնից սիրտս է վառում
«Ես պիտի ապրեմ... ծայնում է կարմրում....
Բայց ահա գլուխ ծռեց երբեմն էլ
Նա լաց է լինում, թէ ինչպէս ընկաւ.
Ինչպէս դրախտի ծովեր ու գետեր
Արնով ներկուեցին,—խոր վիշտը եկաւ...
Տանջուած, հիասթափ մրմունջն է հնչում.
Ինչպէս անցորդներ նուրբ անպատուեցին.
Ինչպէս զոհ եղած իր երկրի սիրուն,
Պատիւը ծախեց, կպաւ իր երկրին..
Շատ հին է այրին. բայց երբ կանգնում է
Աչքերը վառուած երկնքի բոցով,
Կարծես ղեռ կոյս է, որ պէտք է ապրէ
Մի գալոց կեանքի նորոգ արեւով...

Ց. ԽԱՆԼԱՐԵԱՆՑ